ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-----» դեկտեմբերի 2009թ. N-----Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆԸ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասին և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Անդամակցել «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միությանը:

2. Երևան համայնքի բյուջեում նախատեսել «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միության անդամության վճար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ

ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆԸ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

«Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միության հիմնական խնդիրն ու նպատակն է նպաստել տեղական ինքնակառավարման զարգացմանը և պաշտպանել համայնքների շահերը: Կազմակերպության գործունեությունը հիմնվում է «Տեղական ինքնակառավարման մասին» եվրոպական խարտիայի և ազգային օրենսդրության վրա: Կազմակերպությունը գործում է 1997թ. դեկտեմբերից: 2005թ. սահմանադրական փոփոխություններից, ապա 2009թ. Երևանի ավագանու ընտրություններից հետո կազմակերպությունը վերաձևավորվեց իրավաբանական անձանց միության: Մինչև 2009թ. կազմակերպության անդամներ էին Երևան քաղաքի թաղային համայնքները: Սույն որոշմամբ նրանց փոխարեն միության անդամ կդառնա Երևան քաղաքը: Որոշման նախագծի ընդունմամբ Երևան համայնքը հնարավորություն կունենա լիարժեք մասնակցել միության աշխատանքներին և միության կողմից իրականացվող ծրագրերին:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆԸ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՅԼ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Որոշման նախագծի ընդունմամբ անհրաժեշտություն է առաջանում ընդունել Երևան քաղաքի ավագանու որոշում՝ Երևան համայնքի բյուջեում վերաբաշխում կատարելու մասին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ